


ՏԵՐԵԻՆԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ



Քանի՞ տեսակ տերեւ կայ:

Ունենալ.— տեսակաւոր տերեւներ.
— թերթ մը ներմակ թուղթ.
— Գունաւոր մատիտներ:

Փորձ. 1. Ծածկէ՛ գրասեղանը թերթով:
2. Դի՛ր տերեւ մը թերթին վրայ, խորտուրտ երեսը դէպի վեր, ապա վրան դիր ներմակ թուղթը:
3. Գունաւոր մատիտով թեթեւ մը ֆսէ թուղթին վրայ եւ կ'ունենաս տերեւին պատկերը:

Աշխատանքը կրկնէ հինգ տարբեր տերեւներով:

Եզրակացութիւն.

Տերեւները կարելի է դասաւորել երկու խումբերու մէջ.— պարզ եւ բարդ:



Պարզ տերեւը կը բաղկանայ մէկ թերթիկէ: Բարդ տերեւը կը բաղկանայ մէկէ աւելի թերթիկներէ:




Տերեւներու եզերքները իրարմէ կը տարբերին: Անոնք կրնան ըլլալ *ովորկ*, *բլթակաձեւ* եւ *սղոցաձեւ*:



Տերեւներու երակները իրարմէ կը տարբերին: Անոնք կրնան ըլլալ *փետրաձեւ*, *ափաձեւ* կամ *գուգահեռական*:

- Ներկէ՛ — կանաչ՝ բարդ տերեւը.
 — կապոյտ՝ բլթակաճեւ տերեւը.
 — դեղին՝ գուգահեռական տերեւը:



Ամբողջացո՛ւր.

	1	2	3	4	5	6	7
բարդ							
պարզ							
ափաճեւ							
գուգահեռական							
փետրաճեւ							
բլթակաճեւ							
սղոցաճեւ							
ողորկ							